

ՅԱԳԻԿՈ—ՄԱԹԵՐԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գ. Թ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՎՈՒՅՆ ԱՂՅՅՈՒՐՆԵՐԻ ԵՐԿՐԱԳՆԴԻ ՄԻԶՈՐԵԱԿԱՆԻ ԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ԶԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր թվագրությունից առաջ, վաղ հելլենիստական շրջանում, հույն հոչակավոր դիանական էրաստոսթենեսը աշխարհագրությանը գիտական տեսք տալու նպատակով՝ աշխատանք է նվիրում երկրագնդի չափերի ուսումնասիրությանը: Նրա այդ աշխատությունը, ինչպես նաև «Աշխարհագրությունը» չեն պահպանվել: «Աշխարհագրության» բովանդակությունը զգալի կերպով արտացոլվել է: Սարարոնի աշխատություններում, իսկ երկրագնդի չափերի որոշման մեթոդը մեզ հասել է աստղագետ Կեռումեղի աշխատության միջոցով:

Էրաստոսթենեսից առաջ և հետո այդ խնդրով զբաղվել են և ուրիշները: Նրանց աշխատությունները ենթարկվել են բազմակողմանի ուսումնասիրության և արդյունքները շարադրվել շատ հեղինակների կողմից¹: Բայց երկրագնդի չափումների հետ կապված որոշ հարցեր մինչև այժմ էլ վերջնականապես չեն բացահայտվել ու չեն ստացել սպառիչ պատասխան:

Ներկա հոդվածում հիշյալ հարցերը մենք քննության նյութ ենք դարձնում հին հայկական աղբյուրներում պահպանված երկարության չափերի հիման վրա:

Բայց նախ տեսնենք՝ երբվանից է երկիրը պատկերացվել գնդաձև, մյուս կողմից, թե էրաստոսթենեսից առաջ ովքեր են զբաղվել երկրագնդի միջօրեականի երկարության որոշման հարցով, ինչպիսի մեթոդներ են կիրառել ու ինչպիսի արդյունքներ

¹ Տե՛ս Ջ. Օ. Թոմսոն, История древней географии, М., 1953; Ա. Պահուկ, История астрономии, М., 1966.

ստացել: Այս կապակցությամբ որոշ մեջբերումներ անենք Զ. Օ. Թոմսոնի և Ա. Պաննեկովի հիշյալ աշխատություններից:

«Չնայած մի շարք հիանալի կուհումներին, իռնացիք խիստ հետամնաց էին աստղագիտության բնագավառում և շարունակում էին մնալ այն կարծիքին, թե Երկրը հարթ է, և գրեթե շըրադվեցին մոլորակների և նրանց տեսանելի շարժումների դիտումներով: Երկու այն հնագույն հաղորդումները, որոնցում Երկրի գնդաձևության տեսությունը վերագրվում է Անաքսիմանդրին կամ, նույնիսկ, Թալեսին, միանգամայն սխալ են, ու շատ ցավալի է, որ այդ սխալը անպատճանատու կերպով կրկնվում է ժամանակակից մի շարք աշխատություններում: Երկրի գնդաձևության տեսությունը առաջին անգամ առաջացել է արևմտյան հույն գաղութաբնակների մոտ: Ինչպես և ե՞րբ է առաջացել այն և ինչպես է գտնել ավելի լայն տարածում ու սկսել է լուրջ կերպով գործադրվել աշխարհագրության խնդիրների մեջ, այս բոլորը շարունակում է մնալ բավականին անորոշագույնը²:

«Եվդոկսը գրել է նաև ձեռնարկ աստղերի մասին, որը Երկար ժամանակ մեծ հեղինակություն է վայելել ու բազմիցս մեկնարանվել: Հնարավոր է, ինչպես մտածում են շատերը, որ նա եղել է Երկրագնդի շրջանագծի Երկրության՝ մեզ հասած ամենահնագույն հաշվումների (400 հազար ստադիա) հեղինակը, իսկ Արիստոտելը բավականին անհոգ կերպով վերցնում է այդ թիվը «մաթեմատիկոսներից», շրացատրելով, թե ինչ եղանակով է դա արտածվել: Պետք է կարծել, որ դա ստացվել է աստղի բարձրության շափման մեթոդով Երկու կետերում, որոնք գտնվում են մոտավորապես միևնույն միջօրեականի վրա: Այդ աստղը, հավանաբար, եղել է Կանոպուսը, որը կնիդիում մի քիչ բարձրանում է հորիզոնից, բայց ավելի է բարձրանում Եգիպտոսում (կա հաղորդում, որ Եվդոկսը որոշ ժամանակ ապրել է Եգիպտոսում, քրմերի հետ միասին զբաղվել է աստղերի ուսումնասիրությամբ):»³:

«Մինչ այդ հույների կատարած աշխատանքների արդյունքները ամփոփելով, մենք տեսնում ենք, որ աշխատության զարգացումը բավականին առաջ է գնացել, թեև ոչ բնական ճանապարհով: Նա ծնվել է մտահայեցողական փիլիսոփիայությունից և դեռ չի ազտագրվել դրանից: Բայց Երկրի գնդաձևության հասկացությունը արդեն ամուր կերպով հաստատված էր, իսկ գոտիների

² ՋԷ. Օ. Թոմսոն, նշվ. աշխ., էջ 167—168:

³ Նույն տեղում, էջ 174—175:

տեսությունը սկսվել էր մշակվել Հետաղայում շատ բան է արվել, որպեսզի այդ հիմքի վրա զարգացվի աշխարհագրական գիտությունը⁴:

«Արիստակելի աշակերտը, որը հատուկ կերպով զբաղվել է աշխարհագրությամբ, հանդիսացել է Դիկեարքոսը Մենք արդեն խոսեցինք այն մասին, թե ինչպես նա հաջողությամբ անցկացրեց Աստծանիք»-ն, կամ Հոռողոսի միջով տարավ կենարոնական մեծ զուգահետականը, որի միջոցով սկսած այդ ժամանակներից, շափվել է բնակելի աշխարհը, նրա կարծիքով բնակելի աշխարհի երկարությունը մեկուկես անգամ զերազանցում է լայնությանը: Բայց մանրամասն տեղեկություններ նրա աշխատությունների մասին քիչ են պահպանվել: Նրանից զբեթե անմիջապես հետո Արքիմեդի մոտ կա մի հիշատակություն այն մասին, որ «որոշ հետազոտողներ ձեռնարկել են» Երկրագնդի շափերը որոշելու նոր փորձեր, և Ենթաքերի ու շատ ուրիշների ասելով, այդ փորձը պատկանում էր Հենց իրեն՝ Դիկեարքոսին: Որոշ հեղինակներ, սակայն, շեն փորձում ճշտել այդ հարցը, իսկ մի այլ հետազոտող գտնում է «հավանական», որ այդ փորձը կատարողը եղել է Եվգալիսը, մի ուրիշը շատ ավելի հակված է վերագրել այդ ծառայությունը Արիստարքոսին, որը տվյալ զեպքում շահագրք-զրոված էր, որպեսզի մատնանշելով մոտավոր մաքսիմումը, ցուցադրի, որ Երկիրը շատ փոքր է տիեզերքի համեմատությամբ (Եթե ոչ Արիստարքոսին, ապա մի այլ հետազոտողի, որը գործուել է մինչ Էրատոսթենեսի խոշոր աշխատության երեսն դալք):

Այդ փորձի ժամանակ դորժադրված մեթոդը, որ շատ պարզ էր, շարադրվում է հետեւալ կերպ: Համարվում էր, որ Ասուանը և Դարդանելի նեղուցի մոտ գտնվող Լիսիմախիան գտնվում էին նույն միջօրեականի վրա, չնայած իրականում նրանց Երկայնությունը տարբերվում է մոտավորապես 6°-ով: Բայց համարվում էր հաշվում գտնվող զենիթների հեռավորությունը հավասար է միջօրեականի $\frac{1}{15}$ -ին:

Հետեւապես, շրջանագծի բուն Երկարությունը պետք է հավասար լինի այդ Երկու կետերի միջև եղած հեռավորության ու 15-ի արտադրյալին: Այդ հեռավորությունը հավասար է 20.000 ստադիայի, որը խիստ շափաղանցված էր (Հետադայում էրատոսթենեսը այն դարձրեց 13.100): Բայց Եթե անգամ այդ հեռավորությունը ճիշտ շափվեր, այնուհանդերձ «համաստեղությունների

⁴ Նույն տեղում, էջ 182:

մեթոդը», իհարկե, չէր կարող լինել բավարար: Ստացված արդյունքը՝ 300.000 ստադիա, թեև զգալիորեն մոտ է ճշմարտության, քան մինչ այդ եղած միակ թիվը՝ 400.000 ստադիան, այնուամենայնիվ խիստ շափառանցված էր (40.000 կմ փոխարեն ավելի քան 52.000 կմ):⁵

Կատարված մեջբերումներից որոշակի երևում է, որ Երկրի գնդաձնության գաղափարը հաստատվել է մոտավորապես մ.թ.ա. V դարում: Էրատոսթենեսից առաջ Երկրագնդի միջօրեականի երկարության համար ստացվել է 400.000, իսկ հետո 300.000 ստադիա, գործադրվել է «համաստեղությունների մեթոդ»:

Այժմ անցնենք էրատոսթենեսի ու Պտղոմեոսի՝ Երկրագնդի միջօրեականի շափումների արդյունքներին: Այդ նպատակով նորից դիմենք Զ.Օ. Թումսոնին և Ա.Պաննեկուկին:

«Հետևապես շրջանագծի որոնելի երկարությունը հավասար է 5000 ստադիա հեռավորությունը բազմապատկած 50-ով, այսինքն՝ 250.000 ստադիա: Այսպես է բացատրում Կլեոմեդը, և պետք է կարծել, որ հիմնականում դա բավական ճիշտ է: Մնացածները, ինչպես օրինակ, Ստրաբոնը, ասում են, որ արդյունքը հավասար է եղել 252.000 ստադիայի, և եթե վերեւում նկարագրված մեթոդը, որ գործադրել է էրատոսթենեսը Երկրի շափումների համար, ճիշտ է, ապա դուրս է զալիս, որ 2000 ստադիան ինքն է ավելացրել, որպեսզի ստանա այնպիսի մի թիվ, որը բաժանվի 360 աստիճանի, կամ, ավելի ճիշտ, 60 մասի վրա (քանի որ աստիճանները մտցրել է հետագայում Հիպարքոսը): Բայց հետազոտողների մեծ մասի կարծիքով 252.000 ստադիան նա ստացել է միանգամից»:⁶

«Ո՞նք այստեղ նորից բախվում ենք ստադիայի մեծության հարցին: Շատերը պաշտպանում են Պտղոմեոսին, պնդելով, թե նա նկատի է ունեցել 210 մետրանոց 180.000 «արքայական» երկար ստադիան, որը օգտագործվում էր այն ժամանակ հոռմեական արեւլքում, դա կհավասարվեր 240.000 կարճ ստադիայի, որոնցով, ըստ գոյություն ունեցող կարծիքի իր շափումներն է կատարել էրատոսթենեսը (սա այն թվերից մեկն է, որին կարելի է հանդիպել Պոսիդոնիոսի մոտ), իսկ ժամանակակից միավորներով կազմում է 37.800 կմ (իրական մեծությունը հավասար է 40.000 կմ): Մյուս

⁵ Նույն տեղում, էջ 223—224:

⁶ Նույն տեղում, էջ 232—233:

կողմից թերալսն դանում է, որ Պաղսմեսը գործադրել է կարճ ստաղիան»⁷:

«Աշխարհագրագետ էրատոսթենես Կիբենացին՝ Արքիմեդի ժամանակակիցը, և զել է Ալեքսանդրիայի գրադարանի ասաշին տնօրեններից մեկը Բացի այն ժամանակվա հայտնի աշխարհի աշխարհագրական նկարագրությունից, նա որոշել է Երկրի չափերը Ավելի ուշ Կլիոմեդը, որն ապրել է Օգոստոս կայսրի դահակալության ժամանակ, իր «Երկնային երևոյթների բոլորածիր տևողություն» աշխատության մեջ տվել է էրատոսթենեսի գործադրած մեթոդի մանրամասն նկարագրությունը Եղիպառոսի հարավում գտնվող Սիենա քաղաքում, ուղղաձիղ խոր ջրհորի հատակը Արեգակը լուսավորում է տարվա ամենաերկար օրվա մեջ, այն ժամանակ, երբ գտնվում է զենիթում: Ալեքսանդրիայում, որը գտնվում է ավելի հյուսիսում, արեգակնային ժամացույցի ափսեի վրա ընկնող սավերն այդ օրը կազմում է լրիվ շրջանի $\frac{1}{50}$ -ը:

Այդպիսով, այդ երկու քաղաքների հեռավորությունը պետք է հաշվար լիներ մոտավորապես Երկրի շրջանագծի $\frac{1}{50}$ -ին:

Որովհեակ այդ հեռավորությունը հավասար է 5000 ստադիայի (դա չափվել է այն ժամանակով, որի ընթացքում թագավորական լրարեները անցել են այդ հեռավորությունը): Երկրի շրջանագիծը պետք է կազմեր 250.000 ստադիա: Ներկայումս շատ են վիճում տվյալ դեպքում օգտագործված ստադիայի երկարության շուրջը: Եթե վերցնենք ստադիայի համար ամենահավանական արժեքը՝ 157 մետր, ապա էրատոսթենեսի արդյունքը շատ կմոտենա Երկրի շրջանագծի իրական մեծությանը: Նույն գրքում Կլեոմեդը նշում է ստուիկ-զիտնական Պոսիդոնիոսին (մ.թ.ա. 135—51 թթ.), որը գործադրել է նույն սկզբունքը հարավային պալծառ աստղ Կանոպուսի նկատմամբ, այդ աստղը Հոռոդոսում շոշափում է հարավային հորիզոնը, իսկ Ալեքսանդրիայում համում է $\frac{1}{2}$ բարձրության: Այդ երկու կետերի միջև եղած հեռավորության (ծովով) հիման վրա, որ համարվել է 5000 ստադիա, որոշվել է Երկրի շրջանագծի մեծությունը՝ 249.000 ստադիա»⁸:

Կատարված մեջբերումներից որոշակի երևում է, որ Երկրի միջօրեականի երկարության համար էրատոսթենեսը, Պոսիդոնիոսը

⁷ Նույն տեղում, էջ 463:

⁸ A. Պանհեկուկ, նշվ. աշխ., էջ 136—137:

և Պտղոմեոսը համապատասխանաբար ստացել են 252.000,
240.000 և 180.000 ասպարեզ (ստադիա):

Մասնավորապես հայտնի չեն տարբեր մեծության ասպարեզների շափերը, արտահայտված երկարության փոքր շափերի միջոցով: Ավելին, շափագետները վերջնականապես չեն որոշել էրատոսթենեսի ասպարեզի մեծությունը՝ արտահայտված մետրերով: Նորագույն շափագետների մոտ ասպարեզի մեծությունը տատանվում է 148—186 մետրի սահմաններում:

Այդ լուծված հարցերի դգալի մասին պատասխանում են հայկական հնագույն աղբյուրներում պահպանված երկարության շափական աղբյուրները: Հնագույն այդ աղբյուրներից այստեղ նշենք հետեւյալները. 1. շափագիտական աղյուսակ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության, 2. շափագիտական աղյուսակ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության, 3. շափագիտական հատված «Յաղագս ընթացքից արեգական և համարոյ շափուց» երկից, 4. շափագիտական աղյուսակ Անանունի Փարիզի ազգային գրադարանի № 114 ձեռագրից, 5. շափագիտական հատված Շիրակացու «Պատճեն տոմարի» աշխատությունից, 6. շափագիտական բացատրություն «Մեկնութիւն տոմարի Անդրէասայ» աշխատությունից, 7. «Մղոնաշափք»:

Դրանց ուսումնասիրությունը և թվերի ճիշտ վերականգնումը, ելնելով շափերի միջև եղած մաթեմատիկական առնչությունից, հատկապես VII դարի հայկական «Աշխարհացոյց»-ի երկու խմբագրություններում, ցույց են տալիս, որ էրատոսթենեսի, Պտղոմեոսի աշխատությունները, ինչպես նաև հայկական «Աշխարհացոյց»-ը կազմելու ժամանակ գործածության մեջ են եղել հետեւյալ շափերը. մասն (աստիճան)=500 ասպարեզ, ասպարեզ օդաշափությամբ= $107\frac{1}{7}$ քայլ, ասպարեզ գետնաշափությամբ= $=142\frac{6}{7}$ և 150 քայլ, մղոն=7 ասպարեզ, մղոն=1000 և 1050 քայլ, քայլ=6 ոտ, ոտ=16 մատ⁹:

Նշված թվերից պարզ երևում է, որ այդ ժամանակ գործադրվել են տարբեր երկարության երեք ասպարեզ: Առաջինը կապված է էրատոսթենեսի անվան հետ: Նա շափումները կատարել է ոչ թե գետնի վրայով, այլ օդով: Դրա համար էլ նշվում է ասպարեզ օդաշափությամբ: Մյուս երկուսը կապված է Պտղոմեոսի

⁹Տե՛ս Գ. Պետրոսյան, Երկարության շափերը հին հայկական աղբյուրներու ու դրանց նոր մեկնաբանությունը, ԹԲՀ, 1970, № 3, էջ 215—228:

անվան հետո՝ նա չափումները կատարել է գետնի վրայով, դրա համար էլ նշվում է ասպարեզ գետնաշափությամբ։ Հայկական աղբյուրներում գործադրված երկարության չափերը ճիշտ կերպով են արտացոլում հունական ավանդությունը, ապացուցում են էրատոսթենեսի, Պոսիդոնիոսի և Պաղոմեոսի կողմից ստացված (252,000, 240,000, 180,000) ու գիտության պատմության մեջ նշված ասպարեզների ճշտությունը։

$$700 \text{ ասպարեզ} \times 360 = 252.000 \text{ ասպարեզ}, \quad 500 \text{ ասպարեզ} \times 360 = \\ = 180.000 \text{ ասպարեզ}$$

$$150 \text{ քամ} \times 180 \cdot 000 = 107 \frac{1}{7} \text{ քամ} \times 252 \cdot 000 = 27.10^6 \text{ քամ}, \quad 142 \frac{6}{7}$$

$$\text{քամ} \times 180 \cdot 000 = 107 \frac{1}{7} \text{ քամ} \times 240 \cdot 000 = \frac{18 \cdot 10^7}{\varrho} \text{ քամ}$$

Երկար ասպարեզի գործադրությունը հանդեցնում է էրատոսթենեսի ստացած ասպարեզների, իսկ կարճ ասպարեզի գործադրությունը՝ Պոսիդոնիոսի ստացած ասպարեզների թվին։ Միաժամանակ հաստատվում է գիտության պատմության մեջ արվող այն հնագործությունը, որ Պաղոմեոսը փոքրացրել է էրատոսթենեսի ասպարեզների թիվը, բայց մեծացրել է ասպարեզի երկարությունը։

Հայկական չափագիտական աղյուսակներից մեզ հասած երկարության չափերը հաստատում են գիտության պատմության մեջ հավանական համարվող ասպարեզների բանակը՝ կապված երկրագնդի միջօրեականի չափումների հետ։

Երկրագնդի միջօրեականի աստիճանային չափումների հաշվումների հունական ավանդությունն ավելի մանրամասնությամբ է պահպանվել Անանիա Շիրակացու աշխատություններում, հատկապես նրա «Աշխարհացուց»-ում։ Այս տեսակետից Շիրակացու «Աշխարհացուց»-ը դուրս է գալիս ազգային սահմաններից ու ստանում համաշխարհային նշանակություն։

Չափ ու կշիռների ճիշտ որոշումը, երկարության չափական աղյուսակների գիտական մեկնարանությունը պատմության տարրեր ժամանակաշրջանների համար, այլ գործոնների հետ միասին, հանդիսանում են ժողովրդի տնտեսական կյանքի, գիտության, հատկապես աշխարհագրության ու աստղագիտության հետ կապված շատ խնդիրների լուծման կարևոր բանալի։

Հայկական աղյուսակների չափագիտական հարուստ նյութն անհրաժեշտարար խնդիր է դնում մասնագետ չափագետների առաջ ուժեղացնելու այդ բնագավառում տարվող գիտական հետազոտությունները, հատուկ ուշագրություն դարձնելով կարեոր

պրոբլեմներից մեկի՝ հին և ժամանակակից շափ ու կշիռների
առնչություններին:

Г. Б. ПЕТРОСЯН

ДРЕВНЕАРМЯНСКИЕ ИСТОЧНИКИ О ГРАДУСНОМ ИЗМЕРЕНИИ ЗЕМНОГО МЕРИДИАНА

Резюме

В литературе по истории наук многократно излагались труды Эратосфена, Посидония и Птоломея. Однако ряд вопросов, связанных с измерением земного меридиана, не получил должного освещения. В частности, неизвестны величины различных стадий, выраженные более мелкими мерами длины.

Таблицы мер длины в древнеармянских источниках VII века дают возможность осветить ряд нерешенных вопросов. В отличие от многих источников, основные меры длины в армянских источниках отражены богаче и выражены также маленькими мерами длины.

Начиная от Эратосфена, Посидония и Птоломея, применялись следующие меры длины: градус заключает в себе 700—500 аспарезов (стадиев); аспарез по воздуху, равный $107\frac{1}{2}$ шагам, аспарез по земле— $142\frac{6}{7}$ и 150 шагам, миля—7 аспарезам. Кроме того, миля=1000—1050 шагам, шаг=6 ступням, ступня=16 пальцам.

Меры длины, примененные в армянских источниках, полностью подтверждают количество аспарезов, полученных Эратосфеном, Посидонием и Птоломеем для длины земного меридиана (252000 , 240000 и 180000): $150 \times 180000 = 107\frac{1}{7} \times 252000$; $142\frac{6}{7} \times 180000 = 107\frac{1}{7} \times 240000$.

Применение длинного аспареза (стадия) Птоломея приводит к числу аспарезов Эратосфена, а короткого аспареза—к числу аспарезов Посидония.